ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՎԻԼՆՅՈՒՍ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Ռոբերտ Խաչատրյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Լիտվայի Հանրապետություն (ք. Վիլնյուս), 2023թ. ապրիլի 18-20-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի՝ Լիտվայի Հանրապետություն (ք. Վիլնյուս) կատարած պաշտոնական այցի շրջանակներում:

5. **Գործուղման նպատակը.**

Հայաստանի և Լիտվայի միջև երկկողմ օրակարգային հարցեր քննարկելու, ինչպես նաև հայ-լիտվական գործարար համաժողովին մասնակցելու նպատակով:

6. **Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.**

Այցի շրջանակներում նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը երկկողմ համագործակցության օրակարգին առնչվող հարցերի քննարկման նպատակով հանդիպումներ է ունեցել մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների և ոլորտային մասնավոր ընկերությունների հետ, մասնակցել հայ-լիտվական գործարար համաժողովին, ներկայացրել Նախարարության գործունեության հիմնական ուղղությունները, Հայաստանում բարձր տեխնոլոգիաների զարգացման նպատակով իրականացվող ծրագրերը, նկարագրել պետության անմիջական մասնակցությունը ոլորտային զարգացման գործընթացում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Լիտվայի Հանրապետությունում ՀՀ դեսպանատան աջակցությամբ ս.թ. ապրիլի 19-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը հանդիպել է Լիտվայի էկոնոմիկայի և նորարարության նախարար Աուշրինե Արմոնայտեի հետ: Հանդիպման

ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում հայ-լիտվական հարաբերությունների զարգացման հեռանկարները, փոխգործակցության առկա ներուժի լիարժեք իրացման հնարավորությունները, ինչպես նաև Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում համագործակցության ուղղությունները: Նույն օրը տեղի է ունեցել հայ-լիտվական գործարար համաժողովը, որի ընթացքում բացման խոսքով հանդես են եկել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը և Լիտվայի Հանրապետության նախագահ Գիտանաս Նաուսեդան: Գործարար համաժողովին ելույթով հանդես է եկել նաև նախարար Ռոբերտ Խաչատրյանը՝ նշելով, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը կարևորում է Լիտվայի հետ համագործակցությունը և երկու երկրների միջև գործակցության ամրապնդումը բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և թվայնացման ոլորտում՝ հաշվի առնելով, որ Լիտվան աշխարհի առաջատար երկրներից մեկն է թվայնացման, էլեկտրոնային կառավարման և նորարարություն ոլորտներում: Նախարար Ռոբերտ Խաչատրյանը ներկայացրել է տեխնոլոգիական ոլորտում ՀՀ կառավարության որդեգրած պետական քաղաքականությունը, ոլորտի զարգացման նպատակով իրականացվող քայլերը, Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացման կարևորությունը, ստարտափ նախաձեռնությունների խթանման ու էկոհամակարգի զարգացման նպատակով իրականացվող դրամաշնորհային ծրագրերն ու օրենսդրական բարեփոխումները, որոնք միտված են դյուրացնել Հայաստանում ոլորտային արտադրանքի ձևավորումը:

Նախարարը նշել է, որ գործարար համաժողովի կազմակերպման փաստը, փոխըմբռնման հուշագրի ստորագրումը Հայաստանի և Լիտվայի միջև համագործակցությունը զարգացնելու պատրաստակամության ևս մեկ ապացույց է:

Հուշագիրը կնպաստի համատեղ հետազոտությունների, նորարարական նախագծերի իրականացմանը, համատեղ գիտական և նորարարական հանդիպումների, գիտաժողովների, համաժողովների, դասընթացների, աշխատաժողովների, ցուցահանդեսների կազմակերպմանն ու մասնակցությանը, ինչպես նաև ոլորտային տեղեկատվության փոխանակմանը:

Ս.թ. ապրիլի 19-ին նախարար Ռոբերտ Խաչատրյանն այցելել է Վիլնյուսի Տեխնոպարկ(Vilnius Tech Park): Այցի ընթացքում քննարկվել են Վիլնյուսի Տեխնոպարկի և Հայաստանում Ինժեներական քաղաքի (Engineering city) միջև նոր ծրագրերի և փորձի փոխանակման հեռանկարները:

Այնուհետև նույն օրն այց է կազմակերպվել «Teltonika» տեխնոլոգիական ընկերություն, որն արտադրում է մասնագիտացված կապի սարքավորումներ միջազգային վաճառքի համար: Նախարար Ռոբերտ Խաչատրյանը ներկայացրել է Նախարարության գործունեության հիմնական ուղղությունները, ծանոթացել ընկերության կողմից իրականացվող ծրագրերի մանրամասներին: Դիտարկվել են Հայաստանի ոլորտային կազմակերպությունների հետ համագործակցության հաստատման հնարավորությունը, ոլորտային զարգացմանն ուղղված համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկարները:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակելու քննարկումները համագործակցության ներուժի բացահայտման, օրակարգի ձևավորման նպատակով:

Նախագահ Վահագն Խաչատուրյանի գլխավորած պատվիրակության կազմում նախարար Ռոբերտ Խաչատրյանն այցելել է Վիլնյուսի համալսարանի գիտական հաղորդակցության և տեղեկատվական կենտրոն (Vilnius University Scholarly Communication and Information Centre (SCIC)), Լիտվայի ֆիզիկական գիտությունների և տեխնոլոգիայի կենտրոն (Center for Physical Sciences and Technology), Լիտվայի Սեյմ, հանդիպել խոսնակ Վիկտորիա Խմելիտե Նիելսենի հետ: Կողմերը կարևորել են հայ-լիտվական բարեկամական հարաբերությունների շարունակական զարգացումն, ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային հարթակներում, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում: Այնուհետև հանդիպում է տեղի ունեցել Լիտվայի արդյունաբերողների միության նախագահ և «BOD (Baltic Optical Disc) GROUP» բարձր տեխնոլոգիական ընկերությունների խմբի խորհրդի նախագահ Վիդմանտաս Յանուլևիչուսի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել շփումները համագործակցության ներուժի բացահայտման, ինչպես նաև երկկողմ այցերի կազմակերպման նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

2023թ ապրիլի 19-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և Լիտվայի Հանրապետության էկոնոմիկայի և նորարարությունների նախարարությունների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ տեխնոլոգիաների և նորարարությունների բնագավառում համագործակցության վերաբերյալ: Հուշագիրը ստորագրել են ՀՀ բարձր

տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը և Լիտվայի Հանրապետության էկոնոմիկայի և նորարարությունների նախարար Աուշրինե Արմոնայտեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը պատրաստակամություն են հայտնել գործնական քայլեր ձեռնարկել փոխշահավետ համագործակցության ամրապնդման ուղղությամբ: Համաձայնություն է ձեռք բերվել ձևավորել աշխատանքային պլան փորձի փոխանակման, համատեղ հետազոտությունների իրականացման վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Միջազգային համագործակցության վարչություն

26.04.2023թ.